ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1961 Общественные науки

Ռ. Պ. Կոնոպակյան

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱ

Նախքան հոդվածի բուն շարադրանքին անցնելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ սովետական արևելագիտական գրականության մեջ դեռևս իր պատշաճ գիտական լուսաբանումը չի գտել արևմտագերմանական մոնոպոլիաների տնտեսական ներխուժումը Արևելքի երկրներ։

Այդ հարցի վերաբերյալ կան միայն հատ ու կենտ ժուռնալային ու լրագրային հոդվածներ։ Իսկ ինչ վերաբերում է արևմտագերմանական մոնոպոլիաների Թուրքիա ներխուժման ուսումնասիրությանը, ապա պետք է ուղղակի ասել, որ այդ մասին նույնիսկ չկան ժուռնալային հոդվածներ։

1954 թ. հունվարին Թուրքիայում ընդունվեց օտարերկրյա կապիտալի խրախուսման օրենք, որի համաձայն օտարերկրյա ու թուրքական կապիտալի իրավունքները հավասարվեցին։ Այդ ժամանակից սկսած ուժեղացավ արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա։ Արևմտագերմանական մոնոպոլիաները այստեղ կատարում են ուղղակի կապիտալներդրումներ, կառուցում են տարբեր արդյունաբերական ձեռնարկություններ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ, ստանում են նավթահետախուզական աշխատանքների կոնցեսիա և այլն։ Այժմ Թուրքիայում գործում են արևմտագերմանական 33 մոնոպոլիաներ, որոնց կապիտալներդրումները կազմում են 18 մլն. արևմտագերմանական մարկ (այսուհետև՝ ար. գ. մարկ)։ Գերմանիայի Ֆեդերատիվ Ռեսպուբլիկան Թուրքիայում գործող թե՛ մոնոպոլիաների թվով և թե՛ նրանց կապիտալներդրումների գումարի չափով գրավում է երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո։

Հատկապես լայն գործունեություն է ծավալում Կրուպպի ֆիրման, որը պլաններ է մշակում իր կապիտալ ներդրումների գումարը հասցնել մինչև 1 միլրդ. ար. գ. մարկի[1]։

Արևմտագերմանական մոնոպոլիաները ներթափանցում են նաև Թուրքիայի գյուղատնտեսության մեջ։

Արևմտյան Գերմանիան իր տնտեսական գիրքերը ուժեղացնելու հետ զուգընթաց, ուժեղացնում է նաև իր քաղաքական, ռազմական ու իդեոլոգիական ազդեցությունը Թուրքիայում։

Այս հոդվածում մենք կաշխատենք պարզաբանել արևմտագերմանական մոնոպոլիաների առևտրական ներխուժումը Թուրքիա, որն ավելի լայն բնույթ ունի և սկսվել է ավելի վաղ, քան ներխուժման մյուս ձևերը։

* *

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի կրած պարտությունից հետո, ՍՍՌՄ-ը, ԱՄՆ-ը և Անգլիան Պոտսդամում ստո-

[1] „Milliet", 1957, 19 mayis.

բագրեցին համաձայնագիր՝ Գերմանիայի ապագա կացութաձևի դեմոկրատացման, մոնոպոլիաների ու սինդիկատների լիկվիդացման և այլի մասին։ Այդ համաձայնագրին այնուհետև միացավ Ֆրանսիան։

Բայց շուտով ԱՄՆ-ը ու արևմտյան մյուս երկրները կոպիտ կերպով խախտեցին այդ համաձայնագիրը և ֆինանսական մեծ «օգնություն» տրամադրեցին արևմտագերմանական մոնոպոլիաներին, որոնք նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ ոչ միայն վերականգնեցին, այլև ավելի քան երկու անգամ ավելացրին իրենց արդյունաբերական արտադրանքի ծավալը։

Արևմտագերմանական մոնոպոլիաները ուժեղացրին իրենց արտաքին առևտրական, ֆինանսական ու տնտեսական ներխուժումը։ Արտահանման ասպարեզում Արևմտյան Գերմանիան կապիտալիստական աշխարհում այժմ հետ է մնում միայն ԱՄՆ-ից, իսկ ներմուծման՝ ԱՄՆ-ից ու Անգլիայից։ Արևմտագերմանական մոնոպոլիաները ակտիվ արտաքին առևտրական ու տնտեսական գործունեություն են ծավալում ոչ միայն Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի, Հարավ-Արևելյան Ասիայի, այլ նաև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում։

Մերձավոր ու Միջին Արևելքում արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժմանն աջակցելու նպատակով Արևմտյան Գերմանիայում հիմնվել է «Մերձավոր ու Միջին Արևելքի ընկերություն» (Nah-und Mittelost Verein)։ Այս ընկերությունը փաստորեն Գերմանական-Արևելյան ընկերության ժառանգորդն է, որը հիմնվել է ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելուց հետո, ու միավորում է այն արևմտագերմանական մոնոպոլիաներն ու բանկերը, որոնք գործում են աշխարհի այս մասում։

Այս ընկերությունը 1956 թ. աշնանը Համբուրգում կազմակերպեց ցուցահանդես՝ նվիրված Մերձավոր ու Միջին Արևելքին։ Ցուցահանդեսը կոչվում էր «Մերձավոր ու Միջին Արևելքը երեկ ու այսօր»։ Ցուցահանդեսին մասնակցում էին մերձավորարևելյան տասը պետություն, այդ թվում՝ Թուրքիան, Իրանը, Եգիպտոսը, Իրաքը։ Ցուցահանդեսը ֆինանսավորվեց ԳՖՌ-ի էկոնոմիկայի մինիստրության, Համբուրգի քաղաքապետության ու 85 մոնոպոլիաների ու բանկերի կողմից։ Ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցավ նաև պատերազմի միջազգային հանցագործ ֆոն Պապենը, որը հատկապես շեշտեց ԳՖՌ-ի ու Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների տնտեսական հարաբերությունների հարցը[3]։

* * *

Գերմանական իմպերիալիզմի ներխուժումը Թուրքիա սկսվել է դեռևս անցյալ դարի կեսերից։ Այդ ներխուժումը հատկապես ուժեղացավ այն ժամանակ, երբ կապիտալիզմը Գերմանիայում թևակոխեց իմպերիալիզմի փուլը։ Բացահայտելով դեպի Արևելքի երկրները իմպերիալիստական պետությունների ներխուժման բուն դրդապատճառները, Վ. Ի. Լենինը իր «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատության մեջ գրում է. «Այս հետամնաց երկրներում շահույթը սովորաբար բարձր է, որովհետև կապիտալները

[2] „Экономика капиталистических стран после второй мировой войны", Статистический сборник, М., 1959, стр. 62—63.

[3] „Moniteur officiel du commerce et de l'industrie", 1956, 22 novembre, p. 3751.

րիչ են, հողի գինը համեմատաբար մեծ չէ, աշխատավարձը ցածր է, հում նյութերեղենները էժան են»[4]։

Արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիան ուներ զգալի դիրքեր Թուրքիայի էկոնոմիկայում, պետական ապարատում ու բանակում։ Ինչպես Վ. Ի. Լենինն էր գրում 1917 թ. սկզբում «Գերմանիան այս տոպեխս Թուրքիային վերածել է իր թե՛ ֆինանսական, թե՛ ռազմական վասալի»[5]։

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի կրած պարտության պատճառով վերջինս կորցրեց իր դիրքերը նաև Թուրքիայում։ Թուրքական ռեսպուբլիկայի կառավարությունը սկսեց վարել էտաթիզմի՝ պետական կապիտալիզմի քաղաքականություն ու ետ դնել օտարերկրյա, այդ թվում նաև գերմանական մոնոպոլիստական կապիտալին պատկանող ձեռնարկությունները։ Բայց համեմատաբար կարճ ժամանակից հետո Գերմանիան նորից սկսեց վարել ակտիվ նվաճողական քաղաքականություն Թուրքիայում։

Ֆաշիստական կարգերի հաստատումից հետո Գերմանիայի տնտեսական ակտիվությունն այստեղ ավելի ուժեղ թափ ստացավ։ Ճիշտ է, գերմանական մոնոպոլիաները զրկված էին ուղղակի կապիտալ ներդրումներ կատարելու հնարավորությունից, բայց մի շարք գերմանական ֆիրմաներ ստացան արդյունաբերական ձեռնարկությունների, էլեկտրակայանների, երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհների շինարարության պատվերներ։ Ուղղակի կապիտալ ներդրումներից ստացվող շահույթների պակասը գերմանական մոնոպոլիաները լրացնում էին առևտրական ներխուժման միջոցով։ Եթե 1930—1933 թթ. ընթացքում Գերմանիայի արտահանումը Թուրքիա տարեկան աճում էր հազիվ 2—3 տոկոսի չափով, ապա արդեն 1933 թ. հետո այդ աճը կազմեց տարեկան 6—8 տոկոս։ 1936 թ. Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմեց վերջինիս ներմուծման 46,4 տոկոսը՝ 1933 թ. 25,5 տոկոսի դիմաց[6]։ 1933—1936 թթ. ընթացքում տարեկան 10—13 տոկոսի չափով աճում էր նաև Գերմանիայի ներմուծումը Թուրքիայից։ Այսպես, օրինակ՝ 1936 թ. Գերմանիայի բաժինը Թուրքիայի արտահանման մեջ կազմեց 51 տոկոս՝ 1933 թ. 18,9 տոկոսի դիմաց[7]։ Գերմանիան գրավում էր առաջին տեղը Թուրքիայի ներմուծման ու արտահանման մեջ։

Գերմանիան իր ստրատեգիական պաշարները լրացնելու նպատակով Թուրքիայից մեծ քանակությամբ ներմուծում էր քրոմ, պղինձ, երկաթ, բամբակ, բուրդ, ինչպես նաև չոր մրգեղեն, հացահատիկ, ծխախոտ և ուրիշ ապրանքներ, և Թուրքիա էր արտահանում արդյունաբերական սարքավորում, էլեկտրատեխնիկական և տեքստիլ ապրանքներ և այլն։ Մասնավորապես հարկավոր է շեշտել, որ գերմանական ֆիրմաները Թուրքիայից ներմուծված գյուղատնտեսական ապրանքների որոշ մասը արտահանում էին ուրիշ շուկաներ և շահույթները լցնում իրենց գրպանները։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ուժեղացավ նաև Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական-

---

4 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հատոր 22, էջ 318, Հայպետհրատ, 1951։

5 Նույն տեղում, հատոր 23, էջ 235։

6 Yves Famchon et Maurice Leruth, „L'Allemagne et le Moyen-Orient", Paris, 1957, p. 14—16.

7 Yves Famchon et Maurice Leruth, ibid. p. 16—20.

թյան վրա։ 1941 թ. հունիսի 18-ին՝ Սովետական Միության վրա ուխտադրում կերպով հարձակվելու նախօրյակին, Գերմանիան Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որը վերջինին ներքաշեց Գերմանիայի արտաքին արկածախնդրական քաղաքականության հորձանուտի մեջ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիան Գերմանիային մատակարարում էր մեծ քանակությամբ գյուղատնտեսական հումք և հանքային հանածոներ։ Գերմանիան ուշադրություն էր դարձնում հատկապես քրոմի հանքանյութի ներմուծմանը։ Գերմանա-թուրքական առևտուրը, որը 1940 և 1941 թթ. բավականաչափ ընկել էր նախորդ տարիների հետ համեմատած (11,9 տոկոս և 12 տոկոս Թուրքիայի ներմուծման մեջ և 8,7 տոկոս ու 21,8 տոկոս արտահանության մեջ), 1943 թ. հասավ 38,1 տոկոսի՝ ներմուծման և 23,7 տոկոսի՝ արտահանության մեջ[8]։ Դրանից հետո գերմանա-թուրքական առևտուրը նորից ընկավ։ Թուրքիայում իրենց եռանդուն գործունեությունն էին ծավալում նաև գերմանական, հատկապես Գերմանական-Արևելյան և Գերմանական-Հոլանդական բանկերը։

Թուրքիայի կողմից Գերմանիային ձևական պատերազմի հայտարարումը 1945 թ. փետրվարին, հանգեցրեց Գերմանիայի տնտեսական դիրքերի համարյա թե լիկվիդացմանը։ Թուրքական կառավարությունն այդ ժամանակ բռնագրավեց գերմանական սեփականությունը (ավելի քան 100 մլն. ար. կ. մարկ գումարի չափով՝ 1961 թ. կուրսով)։

Բայց իրենց ռազմաարդյունաբերական ուժերը վերականգնելուց հետո արևմտագերմանական մոնոպոլիաները նորից սկսեցին ակտիվ առևտրական գործունեություն ծավալել Թուրքական շուկայում։ Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, գերմանական իմպերիալիզմը Թուրքիայում վարում է գաղութային քաղաքականություն, որը ոչ բովանդակությամբ և ոչ էլ իր մեթոդներով չի տարբերվում վաղեմի քաղաքականությունից։

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, արևմտագերմանական իմպերիալիզմի Թուրքիայում վարած գաղութային քաղաքականության գլխավոր լծակը տնտեսական ներխուժումն է, իսկ նպատակը՝ հաստատելով իր գերիշխանությունը երկրի էկոնոմիկայի վրա, այն վերածել իր հումքային հավելուկի ու ձևականորեն պահպանելով նրա պետականությունը, գրկել նրան ներքին ու արտաքին ինքնուրույն քաղաքականությունից։

Արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա մեծ չափով աջակցում են ԳՖՌ-ի պետական գործիչները ու գործարար շրջանների աչքի ընկնող ներկայացուցիչները, որոնք ստեպ-ստեպ այցելում են Թուրքիա։ Եթե մենք մի թռուցիկ հայացք ձգենք անցած ժամանակաշրջանի վրա, ապա կտեսնենք, որ Թուրքիա են այցելել ԳՖՌ-ի համարյա թե բոլոր բարձրաստիճան պետական գործիչները։ Պաշտոնական այցելությամբ Թուրքիա են այցելել ԳՖՌ-ի կանցլեր Ադենաուերը (1953, 1954 և 1957 թթ.), վիցե-կանցլեր ու էկոնոմիկայի մինիստր Էրհարդը (1951 և 1959 թթ.), ռազմական մինիստրներ Բլանկը (1955 թ.) ու Շտրաուսը (1957 թ.), ԳՖՌ-ի նախկին պրեզիդենտ Հեյսը (1957 թ.), հաղորդակցության ճանապարհների մինիստր Զէէրոմը (1957 թ.), գյուղատնտեսության մինիստր Լյուբրկեն (1957 թ.) և ուրիշներ։

---

[8] Նույն աղբյուր, p. 21.

Ագենտների ու մյուս պետական գործիչների ճանապարհորդությունները դեպի Թուրքիա վկայում են այն մասին, թե նրանք ինչպիսի մեծ նշանակություն են տալիս արտաքին տնտեսական էքսպանսիային ու ինչպիսի ջանասիրությամբ են պաշտպանում մոնոպոլիստական կապիտալի՝ իրենց տիրոջ շահերը։

Թուրքիա են այցելել նաև արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են գերմանական նախկին դեսպանության առևտրական խորհրդական Շենկեն (1951 թ.), գերմանական բանկի նախկին դիրեկտոր Վեյդեմանը (1951 թ.), Արևմտյան Գերմանիայի առևտրական պալատի դիրեկտոր Մյուլլերը (1951 թ.), Շախտը (1954 թ.), Ալֆրեդ Կրուպպը (1957 թ.) և ուրիշներ։ 1951 թ. աշնանը Թուրքիա ժամանեց նաև ֆոն Պապենը։ Անդրադառնալով ֆոն Պապենի Թուրքիա կատարած ուղևորության արդյունքներին «Սպեկտեյտոր» հանդեսը գրում է. «Ժամանակակից Թուրքիայի քաղաքականության ամենազարմացուցիչ առանձնահատկություններից մեկը Թուրքիայի ու Գերմանիայի միջև եղած վաղեմի կապերի վերականգնումն է։ Ի տեղի ասած, ֆոն Պապենի ապարատի (ռազմական ժամանակի) մի քանի աշխատակիցներ, ըստ լուրերի, արդեն հիմնավորվել են գերմանական դեսպանատանը։ Չանազան առևտրական, կուլտուրական ու տեխնիկական միսիաների կազմում Թուրքիա վերադարձած գերմանացիները, որոշ բարձրագոչ, բայց լիակատար հիմքերով վստահություն են հայտնում իրենց ապագա մասսայականության մասին»[9]։

Արևմտագերմանական մոնոպոլիաների առևտրական ներխուժմանը Թուրքիա մեծ չափով աջակցում են նաև իրենց կապերը թուրքական միջնորդ-առևտրական բուրժուազիայի հետ, որոնք հաստատվել են դեռևս 20-րդ դարի սկզբներին և շարունակում են մինչև մեր ժամանակները։

Արևմտագերմանական մոնոպոլիստական մամուլը լայնորեն քննարկում է թուրքական շուկայի զավթման հարցը։ Հրատարակվում են գրքեր, որոնք Թուրքիայի դաղութացման ուղղակի կոչեր են անում։ Այս գրքերում գովերգում են նաև գերմանական ֆաշիստների ու թուրքական կառավարողների «վաղեմի սրտագին բարեկամությունը» ու Թուրքիային դեպի Արևմտյան Գերմանիա կողմնորոշելու տնտեսական ու քաղաքական «օգտավետությունը»։ Արևմտագերմանական մոնոպոլիստական շրջանների հափշտակողական պլանները Թուրքիայի նկատմամբ առավել հստակ ու պարզ կերպով հռչակվել են Շախտի կողմից, որը չի դադարում գովերգելուց այն միտքը, թե «Թուրքիան ու Գերմանիան տնտեսապես լրացնում են միմյանց»[10]։

Պատերազմում կրած պարտության ու նրան հաջորդած տնտեսական քայքայվածության պատճառով Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ 1946 թ. հարիվ կազմեց 0,03 տոկոս[11]։ Այդ նույն տարվա ընթացքում Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի արտահանման մեջ իջել էր մինչև զերոյի։

Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի հաշվեկշռում Արևմտյան Գերմանիային փոխարինեց Անգլիան։ Բայց «Տրումենի դոկտրինայի» ու «Մարշալ-

[9] „Spectator", 1951, 2 november, p. 562.
[10] Տե՛ս „Известия", 23 марта, 1954.
[11] Yves Famchon et Maurice Leruth, ibid, p. 21.

լի պլանի» հռչակումից հետո ԱՄՆ-ին հաջողվեց Անգլիային ետին պլան մղել և Թուրքական շուկայում գրավել առաջին տեղը։

Արևմտագերմանական մոնոպոլիաների ռազմաարդյունաբերական հզորության վերականգնման զուգընթաց սկսում է աշխուժանալ նաև նրանց առևտուրը Թուրքիայի հետ։ Այսպես, օրինակ, եթե 1947 թ. Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ կազմեց 0,02, իսկ 1948 թ. 0,8 տոկոս, ապա 1949 թ. այն կազմեց 4,6 տոկոս, իսկ Թուրքիայի արտահանման մեջ համապատասխանաբար՝ 0,1, 3,8 և 16,1 տոկոս[12]։

1948 թ. ապրիլի 19-ին կնքվեց առևտրական առաջին պայմանագիրը Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի օկուպացիոն ֆրանսիական գոտու միջև, որից հետո նույն թվականի դեկտեմբերի 16-ին կնքվեց առևտրական պայմանագիր Թուրքիայի ու Բիզոնիայի միջև։ Շուտով՝ 1949 թ. հունվարի 15-ին, կնքվեց նոր առևտրական պայմանագիր Թուրքիայի ու Տրիզոնիայի միջև։ Արդեն 1949 թ. Արևմտյան Գերմանիան Թուրքական շուկայում առաջ անցավ Անգլիայից ու գրավեց երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո։

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտրական էքսպանսիային Թուրքիա, որոշ չափով աջակցեց նաև այն հանգամանքը, որ 1950 թ. մայիսին իշխանությունն այստեղ անցավ Դեմոկրատական պարտիայի ձեռքը, որի պարագլուխներից մեկը՝ Ջելալ Բայարը հանդիսանում է թե՛ ամերիկյան և թե՛ գերմանական իմպերիալիզմի վաղեմի կամակատարը։ Դեմոկրատական պարտիայի հաղթանակը ընտրություններում մեծ գոհունակությամբ ընդունվեց արևմտագերմանական գործարար շրջանների կողմից։ «Վիրտշաֆտզդիենստ» թերթը այդ կապակցությամբ գրում է, որ Դեմոկրատական պարտիայի իշխանության գլուխ անցնելը բացում է նոր հնարավորություններ արևմտագերմանական մոնոպոլիաների Թուրքիա ներխուժման համար։ Թերթը հատկապես շեշտում էր այն հանգամանքը, որ Թուրքիան ու Արևմտյան Գերմանիան տնտեսապես լրացնում են միմյանց[13]։

Ներքոհիշյալ աղյուսակները ակնհայտ կերպով ցույց են տալիս, թե արևմտագերմանական մոնոպոլիաները ինչ տեղ են գրավում Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի հաշվեկշռում։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

(ըստ առանձին երկրների, տոկոսներով)

	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	24,5	11.1	8,4	11,3	15,0	22,4	21,1	30,7	27,8	21,7
Անգլիա	10.4	17,1	17,8	13,7	8,7	7,8	8,2	7.7	7.1	11.6
Արևմտյան Գերմանիա	17,6	23,7	25,0	20,8	17,3	17,6	23.6	23,6	15,5	18.9

[12] Նույն տեղում, p. 46.
[13] Նույն տեղում, p. 81.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

(ըստ առանձին երկրների, տոկոսներով)[14]

	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	16,9	21,4	16,0	20,2	17,4	15,5	19,7	26,0	20,3	17,8
Անգլիա	14,0	8,3	6,6	6,8	6,9	7,4	7,6	9,2	6,2	9,6
Արևմտյան Գերմանիա	22,2	26,6	23,7	15,4	17,8	15,7	16,6	12,9	18,0	22,4

Վերոհիշյալ թվերը միանգամայն պարզ ցույց են տալիս, թե ինչպիսի ուժեղ մրցակցություն է տիրում Թուրքական շուկայում ամերիկյան, անգլիական ու արևմտագերմանական մոնոպոլիստական խմբավորումների միջև։ Բայց այդ թվերը միաժամանակ վկայում են նաև այն մասին, որ չնայած այդ ուժեղ մրցակցությանը, Արևմտյան Գերմանիայի առևտրական ներխուժումը Թուրքիա, հետպատերազմյան առաջին տարիների համեմատությամբ, անհամեմատ ուժեղացել է։ Սակայն Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի մեջ տոկոսային հարաբերությամբ վերցրած զիջում է նրանց միջև գոյություն ունեցող նախապատերազմյան առևտրի մակարդակին։

Աղյուսակների թվերից երևում է նաև, որ համեմատաբար կարճ ժամանակաշրջանում արևմտագերմանական մոնոպոլիաներին հաջողվեց Թուրքական շուկայում մեկընդմիշտ ետին պլան մղել անգլիական մոնոպոլիաներին։ Այստեղ մրցակցությունը առաջնության համար այժմ ծավալվում է միայն ու միայն ամերիկյան ու արևմտագերմանական մոնոպոլիաների միջև, որը որոշ տարիներում լուծվում է վերջինների օգտին։ Այսպես, օրինակ՝ 1951—1954 և 1959 թթ. ընթացքում Արևմտյան Գերմանիան գրավում էր առաջին տեղը Թուրքիայի առևտրական շրջանառության մեջ։

Աղյուսակների տվյալները հաստատում են նաև, որ արդեն 1950 թ. Արևմտյան Գերմանիան Թուրքիայի արտահանման մեջ առաջ անցավ նաև ԱՄՆ-ից, իսկ Թուրքիայի առևտրական շրջանառության մեջ 1951 թ. գրավեց առաջին տեղը։ 1951 թ. Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմեց 105,002 հազար դոլլար, իսկ ներմուծումը՝ 83,639 հազար դոլլար՝ ԱՄՆ-ի համապատասխանաբար 60,074 հազար դոլլարի և 67,537 հազար դոլլարի դիմաց[15]։ Թուրքական շուկայում վերոհիշյալ երկրների մրցակցության տեսակետից, շատ հատկանշական է 1952 թ., երբ Արևմտյան Գերմանիայի առևտուրը Թուրքիայի հետ համարյա հավասարվեց ԱՄՆ-ի ու Անգլիայի առևտրի չափին։ Թուրքական պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն, այդ տարում Արևմտյան Գերմանիայի ներմուծումը Թուրքիայից կազմեց 240,7 մլն. Թուրքական լիրա, իսկ ԱՄՆ-ի և Անգլիայի ներմուծումը՝ 228,9 մլն. թ. լիրա։

---

[14] Աղյուսակները կազմված են մեր կողմից՝ ըստ հետևյալ աղբյուրների. Е. Лудшувейт, „Турция", М, 1955, стр. 398., „Экономическое положение капиталистических стран в 1955 году", М., 1956, стр. 537; „Middle Eastern affairs", 1957, august-september, p. 312., „Istanbul", 1957, 18 aralik., „Three Monthly economic review Turkey", Annual-supplement, London, may, 1960, p. 9.

[15] Yves Famchon et Maurice Leruth, ibid, p. 47

Այդ նույն թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմեց 388,6 մլն. թ. լիրա, կամ ընդամենը 20 մլն. լիրայով պակաս, քան ԱՄՆ-ի ու Անգլիայի արտահանումը[16]։

Արևմտյան Գերմանիան Թուրքիա է արտահանում արդյունաբերության գանազան ճյուղերի սարքավորումներ, էլեկտրատեխնիկական, օպտիկայի ու ճշգրիտ մեխանիկայի ապրանքներ, գյուղատնտեսական մեքենաներ, տրանսպորտի միջոցներ բեռնատար ու մարդատար ավտոներ, շոգենավեր, տպագրական մեքենաներ, երկաթի ու պղնձի ձուլվածք, պողպատյա խողովակներ, բրդյա ու բամբակյա մանվածք ու կտորեղեն, թուղթ, քիմիական ներկեր, ռետինատեխնիկական ապրանքներ, դեղորայք, ցեմենտ, քիմիական պարարտանյութեր և այլ ապրանքներ։ Նա գրավում էր առաջին տեղը Թուրքիայի ներմուծման մեջ այնպիսի ապրանքներով, ինչպիսին են երկաթի ու պողպատի ձուլվածքը, էլեկտրատեխնիկական սարքավորումը, տրանսպորտի միջոցները, տեքստիլ ու բրդյա գործվածքեղենը, պատրաստի հագուստը, մանվածքը, քիմիական ապրանքները և այլն։

Իր հերթին Թուրքիան Արևմտյան Գերմանիա է արտահանում քրոմի հանքանյութ, մարգանեց, երկաթի ու պղնձի հանքաքար, կենդանի անասուն, ցորեն, գարի, վարսակ, ծխախոտ, բամբակ, բուրդ, ձիթենի, շոր մրգեղեն, միրգ, կաշի, կաղին, գինի, օղի, ձկան պահածոներ, անտառափայտ, դաբաղանյութ և այլն։

Թուրքիան Արևմտյան Գերմանիային քրոմի հանքաքարի հիմնական մատակարարողն է։

«Թուրքիան հանդիսանում է Արևմտյան Գերմանիայի գլխավոր գնորդը ու մատակարարողը Մերձավոր Արևելքում»—գրում է բելգիական «Դրապո ռուժ մագազին» թերթը[17]։

Եթե մենք վերցնենք թուրք-արևմտագերմանական առևտրի ապրանքային կազմը, ապա 1955 թ. այն ուներ հետևյալ պատկերը. Արևմտյան Գերմանիան Թուրքիայից հիմնականում ներմուծել է ծխախոտ ու սննդամթերք (105,962,000 ար. գ. մարկ), բամբակ, երկաթ, մարգանեց, քրոմ (72,359,000 ար. գ. մարկ) և ուրիշ ապրանքներ։ Այդ նույն թվականին արևմտագերմանական արտահանումը Թուրքիա բաղկացած էր հետևյալ ապրանքներից՝ բամբակյա գործվածքեղեն (95,719,000 ար. գ. մարկ), մեքենաներ ու նավեր (76,819,000 ար. գ. մարկ), սարքավորում սննդհամի արդյունաբերության համար (49,156,000 ար. գ. մարկ), սարքավորում տեքստիլ ու կաշվեղենի արդյունաբերության համար (12,415,000 ար. գ. մարկ), քիմիական ապրանքներ ու դեղորայք (11,101,000 ար. գ. մարկ) և ուրիշ ապրանքներ[18]։

Արևմտյան Գերմանիան Թուրքիայից մեծ քանակությամբ գյուղատնտեսական հումք ու հանքային հանածոներ է ներմուծում իր ստրատեգիական պաշարները լրացնելու և ռազմականացումը արագացնելու նպատակով։ Արևմտյան Գերմանիան ձգտում է Թուրքիան վերածել իր ռազմական մեքենայի հումքային կցորդի և ապրանքների վաճառահանման հարմար շուկայի։ Այդ տեսակետից Արևմտյան Գերմանիայի առևտրական քաղաքականությունը Թուրքիայում

[16] „Yeni Istanbul", 1954, 14 subat.
[17] „Drapeau rouge magazine", 1958, 26 avril.
[18] „Moniteur officiel du commerce et de l'industrie", 1956, 22 novembre, p. 3751.

ոչնչով չի տարբերվում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ֆաշիստական Գերմանիայի վարած քաղաքականությունից։

ԹՈՒՐՔ-ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ[19]

(միլիոն թուրքական լիրա)

	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
Ներմուծում	265,7	388,6	311,1	232,2	244,7	269,0	151,2	136,9	234,6
Արտահանում	234,3	240,7	170,1	167,4	137,6	141,1	125,0	126,7	222,9

Այսպիսով, ստացվում է, որ վերոհիշյալ տարիների ընթացքում Թուրք-արևմտագերմանական առևտուրը ունեցել է մշտական պակասորդ (դեֆիցիտ), որը ընդհանուր առմամբ կազմում է 668,2 մլն. թ. լիրա կամ Թուրքիայի արտաքին առևտրի պակասորդի ավելի քան 25 տոկոսը։ Թուրք-արևմտագերմանական առևտրական փոխհարաբերությունները քննելիս երևում է, որ այն կրում է փոփոխական բնույթ՝ թե՛ ընդհանուր ծավալի և թե՛ ապրանքային ցուցակի տեսակետից։

Թուրք-արևմտագերմանական առևտրի մեջ Արևմտյան Գերմանիայի ներմուծման նկատմամբ արտահանման զգալի գերակշռության ու Թուրքիայի արտաքին առևտրական պակասորդի մշտական աճի կապակցությամբ Արևմտյան Գերմանիան այստեղ հանդիպում է լուրջ դժվարությունների։

Այսպես, օրինակ, 1953 թ. Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա, 1952 թ. համեմատությամբ, ընկավ 26 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 8 տոկոսով։ Այդ նույն թվականին Թուրքական կառավարությունը սառեցրեց արևմտագերմանական շահույթը մոտ 120 մլն. ար. գ. մարկի չափով ու նույնիսկ սահմանափակեց Արևմտյան Գերմանիայից կատարվող ներմուծումը։ Արևմտյան Գերմանիան իր հերթին կրճատեց իր արտահանումը Թուրքիա։ 1953 թ. Թուրքիայի ու Արևմտյան Գերմանիայի միջև տեղի էին ունենում բանակցություններ՝ թուրքական գյուղատնտեսական ապրանքները Արևմտյան Գերմանիա արտահանելն ավելացնելու համար։ Բանակցություններն ավարտվեցի՝ առևտրական համաձայնագրերի կնքումով (1953 թ. օգոստոս), որով Թուրքիան հնարավորություն էր ստանում 1953—1954 թթ. ընթացքում Արևմտյան Գերմանիա արտահանել 700.000 տոննա հացահատիկ, 12.000 տոննա ծխախոտ, 40.000 տոննա բամբակ ու 32.000 տոննա մրգեղեն[20]։

Այդ նույն թվականի հոկտեմբերին Արևմտյան Գերմանիա մեկնեց Թուրքական առևտրական պատվիրակություն, որը բանակցություններ վարեց հացահատիկային կուլտուրաների արտահանման հարցի շուրջը։ Բանակցությունների ընթացքում Արևմտյան Գերմանիան վերջնականապես համաձայնվեց

---

[19] Աղյուսակը կազմված է մեր կողմից՝ ըստ հետևյալ աղբյուրների։ Б. И. Потаповский, „Экспансия западногерманских монополий на Ближнем и Среднем Востоке", „Советское востоковедение", 1958, № 4, стр. 53; "Yearbook of international trade statistics", 1958, Volume I, United Nations, New York, 1958, p. 508; „The Middle East 1959", London, 1959, p. 312; „Bulletin Des Press-und Informationsamtes der Bundesregierung", Bonn, den 17 marz, 1960, s. 512; „The Middle East 1961", London, 1961, p. 343.

[20] „Le Journal d'Orient", 1953, 7 août.

Թուրքիայից ներմուծել տարեկան ոչ պակաս, քան 700.000 տոննա հացահատիկ[21]։

1954 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա, 1953 թ. համեմատությամբ կրճատվեց 22 տոկոսով։ Եթե 1953 թ. Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա կազմեց 311.0 մլն. ար. դ. մարկ, ապա 1954 թ. այն կազմեց 232,0 մլն. ար. դ. մարկ[22]։ Բայց 1954 թ. դեկտեմբերի 21-ին երկու երկրների միջև կնքվեց առևտրական նոր պայմանագիր, որից հետո հաջորդ տարում Արևմտյան Գերմանիայի արտահանումը Թուրքիա, 1954 թ. համեմատությամբ աճեց 5 տոկոսով։ Այդ կազմեց Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների արևմտագերմանական արտահանման համարյա 1/5 մասը[23]։

Այժմ հարց է ծագում, ի՞նչ հոդի վրա և ինչ միջոցներով է ծավալվում թուրք-արևմտագերմանական առևտուրը, հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ դեռևս 1953 թ. մայիսին, Դորդմունդում ունեցած իր ելույթում էրհարդը հանդստացրեց Արևմտյան Գերմանիայի մրցակիցներին, որ ԴՖՌ-ն չի ձգտի ավելացնել իր արտահանումը վարկավորման միջոցով,[24]։ Բայց էրհարդի հայտարարությունը արված էր զուտ ասելու համար։ Իր առևտրական յիրքերը Թուրքիայում չկորցնելու ու ավելի ուժեղացնելու նպատակով Արևմտյան Գերմանիան Թուրքիային տրամադրում է վարկեր կամ, ուղղակի ասած, իր սեփական միջոցներով վարկավորում է առևտուրը Թուրքիայի հետ։ Այսպես, օրինակ՝ 1954 թ. արևմտագերմանական պետական «Հերմես» ապահովագրական ընկերությունը Թուրքիային տրամադրեց 170 մլն. ար. դ. մարկ՝ քիմիական ձեռնարկությունների սարքավորում ու նավեր գնելու համար։ Բայց Թուրքիայի նախկին պրեմյեր-մինիստր Ադնան Մենդերեսի Բոննում վարած բանակցություններից հետո 1954 թ. դեկտեմբերին կնքվեց նոր առևտրական պայմանագիր, որի համաձայն Արևմտյան Գերմանիան վերոհիշյալ վարկի փոխարեն համաձայնվեց Թուրքիային տրամադրել 225 մլն. ար. դ. մարկ[25]։ Այդ վարկից 180 մլն. ար. դ. մարկ տրամադրվեց պետության, իսկ մնացածը՝ մասնավոր ընկերությունների կողմից։ Վարկը տրամադրվեց Թուրքիային 4 տարի ժամանակով, տարեկան 7,8 տոկոսի հաշվով։ Արևմտյան Գերմանիան միաժամանակ Թուրքիայից պահանջեց արևմտագերմանական մոնոպոլիաներին հնարավորություն տալ՝ մասնակցելու արտադրության միջոցների արդյունաբերության մեջ, որին Թուրքիան իսկույն համաձայնվեց։ 1955 թ. սկզբներին արևմտագերմանական ֆիրմաները Թուրքիային նոր վարկ տրամադրեցին 325 մլն. ար. դ. մարկ գումարի չափով[26]։

1958 թ. հուլիսին Բոննի կառավարությունը որոշեց նոր վարկ տրամադրել Թուրքիային[27]։ Բայց Արևմտյան Գերմանիայի այս քայլը լուրջ դիմադրության հանդիպեց ամերիկյան կառավարողների կողմից, որոնք ձգտում են ամեն կերպ ուժեղացնել իրենց ազդեցությունը Թուրքիայի վրա։ ԱՄՆ-ը հանդես եկավ

[21] "Yeni Istanbul". 1954. 30 subat.

[22] Б. И. Потаповский. там же, стр. 53.

[23] „Экономическое положение капиталистических стран в 1955 году". М. 1956, стр. 412.

[24] „Бюллетень иностранной коммерческой информации". М. 1953, № 60, стр. 1.

[25] „Handelsblatt", 1956, 17 februar.

[26] „Financial Times". 1955. 10 august.

[27] „Vatan". 1958. 29 agustos.

Թուրքիային միասնական վարկ տրամադրելու առաջարկով։ 1958 թ. օգոստոսին արևմտյան երկրները որոշեցին Թուրքիային տրամադրել վարկ 359 մլն. դոլլար գումարի չափով։ Այս վարկից 234 մլն. դոլլար տրամադրվում է ԱՄՆ-ի, 100 մլն. դոլլար՝ Եվրոպական Վճարման Միության և 25 մլն. դոլլար՝ Միջազգային Վալյուտային ֆոնդի կողմից[28]։

Ինչպես այնուհետև հայտնի դարձավ, Եվրոպական Վճարման Միության 100 մլն. դոլլար վարկի կեսը (210 մլն. ար. դ. մարկ) Թուրքիային տրամադրելու է Արևմտյան Գերմանիան։ Անգլիական մամուլի հաղորդման համաձայն, ԳՖՌ-ի պառլամենտի բյուջետային հանձնաժողովը պահանջում էր, որ այդ վարկը Թուրքիային տրամադրվի, միայն ու միայն երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում վերջինի կողմից բռնագրավված գերմանական սեփականություն վերադարձնելուց հետո[29]։

Սեփականության հարցը Արևմտյան Գերմանիայի օգտին լուծվելուց հետո, 1959 թ. դեկտեմբերի 2-ին, բունդեստագը հաստատեց այդ վարկը[30]։

1960 թ. մարտին Ադենաուերի կառավարությունը առանց բունդեստագի քննարկման՝ Թուրքիային տրամադրեց ևս 150 մլն. ար. դ. մարկ[31]։ Այսպիսով, մինչև 1960 թ. վերջը Արևմտյան Գերմանիայի տնտեսական «օգնությունը» Թուրքիային կազմեց 910 մլն. ար. դ. մարկ[32]։ Բայց հարկավոր է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ամերիկյան տնտեսական «օգնության» կեսից ավելին ծախսվում է ռազմականացման նպատակով։ Նման դեպքում ստացվում է, որ Արևմտյան Գերմանիան գրավում է առաջին տեղը Թուրքիային տնտեսական «օգնություն» տրամադրելու բնագավառում։ Իսկ վերջերս հայտնի դարձավ, որ արևմտագերմանական ռևանշիստները ձգտում են Թուրքիայի վզին փաթաթել նաև իրենց ռազմական «օգնությունը», նպատակ ունենալով այդ ասպարեզում լիովին փոխարինել ԱՄՆ-ին[33]։

Թուրք-արևմտագերմանական առևտրի ապագան խիստ անհանգստություն է պատճառում Արևմտյան Գերմանիային, որը մի կողմից չի ցանկանում կորցնել իր դիրքերը Թուրքական շուկայում, իսկ մյուս կողմից հնարավորություն չունի իր ցանկացած չափով ու տեմպերով շարունակել առևտուրը Թուրքիայի հետ, փաստորեն թալանել նրա բնական հարստությունները։ Թուրքիայի հետ ունեցած առևտրական դժվարություններից արևմտագերմանական մոնոպոլիաներին փրկեց ԳՖՌ-ի կառավարությունը։

1956 թ. օգոստոսի 29-ին Արևմտյան Գերմանիայի ու Թուրքիայի միջև կնքվեց Թուրքիային զենքի ու զինամթերքի արտադրության պատվեր տալու պայմանագիր 740 մլն. ար. դ. մարկ դումարի չափով։ Այս պայմանագիրը միաժամանակ համապատասխանում է Բոնnի կառավարողների ռազմատենչ քաղաքականությանը, որոնք ձգտում են մի կողմից թեթևացնել փոխադարձ վճարումները, իսկ մյուս կողմից՝ արագացնել բունդեսվերի վերազինումը։ Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1957 թ. մայիսի 10-ին, երբ այն հաստատվեց Արևմտյան Գերմանիայի բունդեստագի կողմից։ Նախքան այդ, 1957 թ. մարտին ԳՖՌ-ի ռազմական մինիստր Շտրաուսը հատուկ ուղևորություն կատարեց

[28] „La Tribune des Nations", 1958, 5 septembre.
[29] „Financial Times", 1958, 28 november.
[30] „Նույն տեղում, 1959, 3 december.
[31] „Современный восток", 1960, № 8, стр. 49.
[32] Ամերիկյան տնտեսական «օգնությունը» Թուրքիային կազմում է ավելի քան մեկ միլիարդ դոլլարի չափով։
[33] „За рубежом", 4 февраля, 1961, стр. 4.

դեպի Թուրքիա՝ վերոհիշյալ պայմանագրի շուրջը վերջնական բանակցություններ վարելու համար։ Պայմանագրի համաձայն Թուրքիան Արևմտյան Գերմանիա պետք է արտահանի ժամանակակից գինամթերք։

Այդ նույն թվականի հունիսին Արևմտյան Գերմանիայի պատվիրած ռազմական հանդերձանքի առաջին մասը արտադրվեց և նմուշները ուղարկվեցին Արևմտյան Գերմանիա, այնտեղ տեղի ունեցող ռազմական մանյովրներում փորձարկելու համար։

Պայմանագրի կնքումից հետո Բոնnի թուրքական դեսպանությունում բացվեց հատուկ բյուրո, որը հետևելու է այդ պայմանագրի իրականացման ընթացքին[34]։

Վերոհիշյալ պայմանագիրը ցնծությամբ ընդունվեց թուրքական կառավարողների կողմից, որոնք աջ ու ձախ գովեստներ էին շռայլում Արևմտյան Գերմանիայի հասցեին, նշելով նրա «բարեհոգի» քայլն այդ պատվերը Թուրքիայում տեղադրելու հարցում։ Թուրքական նախկին պաշտոնաթերթ «Ջաֆերը» գրում է, որ պայմանագրի կնքումով հարաբերությունները երկու երկրների միջև մտնում են զարգացման մի նոր փուլի մեջ։ «Հավադիս» թերթը չհապաղեց այդ առթիվ գոհոզաբար հայտարարել, թե «այն հանդամանքը, որ Գերմանիայի (այսինքն Արևմտյան Գերմանիայի—Ռ. Կ.) նման արդյունաբերական բարձր մակարդակի հասած մի երկիր, իր բանակի կարիքները բավարարելու համար դիմում է Թուրքիային, խոսում է այն մասին, որ թուրքական արդյունաբերությունը զարգացման բարձր աստիճանի է հասել»[35]։ Այնինչ իրականում այդ պայմանագիրը կոչված է թուրքական էկոնոմիկան ավելի սերտ կերպով կապելու արևմտագերմանական ռևանշիստների արտաքին ագրեսիվ քաղաքականության հետ, որը բոլորովին չի համապատասխանում ո՛չ գերմանական, ո՛չ թուրքական, ո՛չ էլ նրանց հարևան ժողովուրդների արմատական շահերին, Եվրոպայում խաղաղության պահպանման ու ամրապնդման շահերին։

Դեմոկրատական պարտիայի պարագլուխները երկիրը արտաքին առևտրական դժվարություններից դուրս բերելու նպատակով ձգտում էին միանալ այսպես կոչված «ընդհանուր շուկային»։ Նրանք հույս ունեին, որ մտնելով «ընդհանուր շուկայի» մեջ, Թուրքիան հնարավորություն կստանա մեծ քանակությամբ գյուղատնտեսական հումք և հանքային հանածոներ արտահանել դեպի այդ շուկայի մեջ մտնող երկրները։ Փաստորեն Թուրքիան ընկնելու է ավելի մեծ տնտեսական դժվարությունների մեջ, որովհետև ստիպված է լինելու իր ցորները բացել արևմտագերմանական արդյունաբերության առաջ։ Այդ իր հերթին կհանգեցնի տեղական ագրարային արդյունաբերության փլզմանը, քանի որ նա ի վիճակի չէ դիմանալու իմպերիալիստական խոշոր մոնոպոլիաների մրցակցությանը։

Բայար-Մենդերես ալիանսավաճառ կառավարության այս մտադրությունը ամեն կերպ քաջալերվում էր արևմտյան երկրների ու հատկապես Արևմտյան Գերմանիայի կողմից։ Եվ դա շատ հասկանալի էր։ Արևմտյան Գերմանիան, ունենալով ուժեղ և զարգացած էկոնոմիկա, քան, բացի ԱՄՆ-ից, ՆԱՏՕ-ի մասնակից[36] և «ընդհանուր շուկայի» մեջ մտնող մյուս երկրները, հափշտակության ավելի մեծ պատառ կստանա։

[34] „Cumhuriyet". 1957, 2 subat.
[35] Տես „Ekonomi gazetesi", 1957, 14 mayis.
[36] Տես Н. С. Хрущев. „Разоружение — путь к упрочению мира и обеспечения дружбы между народами", „Правда", 15 января 1960 года.

Այդ իսկ պատճառով «ընդհանուր շուկայի» մեջ մտնող երկրներից առաջինը Արևմտյան Գերմանիան էր, որ էրհարդի Թուրքիա կատարած այցելության ժամանակ հայտարարեց, որ Արևմտյան Գերմանիան կպաշտպանի Թուրքիայի ձգտումը՝ միանալու այդ շուկային։ Այսպիսով, արևմտագերմանական մոնոպոլիաների կողմից «ընդհանուր շուկայի» օգտագործումը՝ իրենց գիրքերը Թուրքիայում էլ ավելի ամրապնդելու համար ոչ այլ ինչ է, քան նրանց վարած գաղութային քաղաքականության դրսևորում։

Թուրքական մի շարք ընդդիմադիր քաղաքական գործիչներ ու թերթեր խիստ քննադատության ենթարկեցին կառավարության այդ մտադրությունը։ Այնուամենայնիվ, 1960 թ. հունվարին Թուրքական կառավարությունը հայտարարեց, որ մտադրություն ունի երկիրը միացնելու «ընդհանուր շուկային»։

Ինչպես հայտնի է 1960 թ. մայիսի 27-ին Բայար-Մենդերեսի կլիկը տապալվեց և իշխանությունն անցավ Թուրքական զինվորականության ձեռքը։ Ջեմալ Գյուրսելի կողմից գլխավորվող Թուրքական նոր կառավարությունը հայտարարել է, որ մտադիր է երկիրը միացնելու այդ շուկային։ Ստացվում է, որ «ընդհանուր շուկայի» նկատմամբ վերաբերմունքի հարցում Գյուրսելը շարունակում է նախկին կառավարության քաղաքականությունը։

Թուրք-արևմտագերմանական առևտուրը իրենից ներկայացնում է շահույթի մի մեծ աղբյուր Արևմտյան Գերմանիայի համար։ Էժան գներով Թուրքիայից ներմուծելով գյուղատնտեսական հումք և հանքային հանածոներ, արևմտագերմանական մոնոպոլիաները Թուրքական խոշոր կալվածատերերի, կուլակների ու գործարանատերերի հետ միասին դաժան շահագործման են ենթարկում Թուրք աշխատավոր գյուղացիությանը և բանվոր դասակարգին։ Բայց արևմտագերմանական մոնոպոլիաները կեղեքում են Թուրքիայի աշխատավոր մասսաներին՝ երկրի հիմնական սպառողներին, նաև մոնոպոլ բարձր գներով արդյունաբերական ապրանքներ արտահանելու միջոցով։ Արևմտագերմանական մոնոպոլիաների առևտրական ներխուժման հետևանքով տնտեսապես քայքայվում են նաև Թուրքիայի մանր արհեստավորները ու առևտրականները։ Բայց այդ առևտուրը շահույթներ է բերում խոշոր հողատերերին, կուլակներին, առևտրականներին ու վաճառականներին, որոնք արևմտագերմանական մոնոպոլիաների հետ միասին թալանում են Թուրք աշխատավորությանը և աջակցում աշխատավորության թշնամիների դիրքերի ամրապնդմանը Թուրքիայում։

Երկրի ռազմականացման ու օտարերկրյա, հատկապես արևմտա-գերմանական մոնոպոլիստական կապիտալին աջակցելու Թուրքական կառավարության ազգային այդ կորստաբեր քաղաքականությունը հանգեցրեց նաև Թուրքիայի տնտեսական դժվարությունների ավելացմանը, ֆինանսների կազմալուծմանը, դրամի արժեքազրկմանը, ներքին ու արտաքին պետական և առևտրական պարտքերի աճմանը, ժողովրդի կենսամակարդակի հետագա իջեցմանը։ Թուրքական նոր կառավարության պաշտոնական տվյալների համաձայն երկրի ներքին ու արտաքին պետական պարտքերը կազմում են 19 մլրդ. թ. լիրա, որի մարումը կտևի մինչև 2008 թվականը[37]։ Ապրուստը 1959 թ.՝ 1950 թ. համեմատությամբ թանկացել էր վեց անգամ, իսկ միջազգային վիճակագրա-

[37] „Ulus", 1960, 22 haziran.

կան պաշտոնական տվյալների համաձայն ապրուստի թանկությամբ Թուրքիան գրավում էր առաջին տեղը աշխարհում[38]։

Թուրքիայի աշխատավոր մասսաները պայքարում են երկրի ռազմականացման և օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի խրախուսման՝ ազգային այդ կործանարար քաղաքականության դեմ, դրանում տեսնելով իրենց երկրի ազգային անկախության ու անվտանգության երաշխիքներից մեկը։

[38] Նույն տեղում, 1959, 8 eylûl.